

Հ.Մ.Ը.Մ. Երուսաղեմի Սկաուտները Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ Ընդհանուր Բանակումին

Վերջապես վարչութեանս ամիսներու վրայ երկարող աշխատանքն առդինաւորուեցաւ ու Երուսաղեմի, Հայֆայի եւ Եաֆայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու 25 սկաուտ արեւուշներու խումբը 28 Յուլիսին ուղղուեցաւ Հայաստան մասնակցելու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Ցրդ Համա- Հ.Մ.Ը.Մ.ական Բանակումին ի Բիւրական, Հայաստան:

Արդարեւ, Թէլ Ավիւ- Վիեննա - Երեւան օդանաւային գծով, 28 Յուլիսի առաւօտեան սկաուտները ժամանեցին Հայրենիք՝ Երեւան, ուր երկօրեայ կեցութենէ ետք այլ սկաուտ խումբերու հետ առաջնորդուեցան Բիւրական բանակավայր, ուրտեղ 650 սկաուտներու հետ միասին անցկացրեցին այս աննախընթաց բանակումը 10 օր:

Բանակումի 10օրեայ յայտագիրը նաեւ կ'ընդգրկէր պտոյտներ թէ այցելութիւններ Հայաստանի սուրբ թէ տեսարժան վայրերը ինչպիսին Գառնի, Գեղարդ, Էջմիածին, Սարդարապատ, Ելաբլուր, Ծիծեռնակաբերդ:



Շրջանիս սկաուտները Գառնիի հեղանոսական տաճարի առջեւ

Շրջանին սկաուտները մեծ խանդով թէ հաճոյքով բերին իրենց մասնակցութիւնը վերոյիշեալ բոլոր պտոյտներու թէ այցերուն եւ անպայման բանակավայրի երբեմն չարքաշ արօրեային:

Սկաուտները առիթն ունեցան աւելի մօտէն ճանչնալու Հայաստան հայրենիքը իր ժողովուրդով, արօրեայով, արշալոյսով եւ մայրամուտով:

Նոյնքան եւ գեղեցիկ առիթն ընծայուեցաւ մեր սկաուտներուն ծանօթանալու իրենց քոյր մասնաճիւղերու անդամ եղբայր քոյրերուն, որոնք ժամանած էին բանակավայր հեռաւոր Լոս Անճըլըսէն, Պուլմոս Այրէսէն թէ

Սիտինեն: Դժբախտաբար, վերջին Լիբանանեան պատերազմական դէպքերու պատճառաւ Լիբանանի շրջանի սկաուտական խումբը չյաջողեցաւ Հայաստան ժամանել, որուն վստահուած էր շատ բան բանակումի կազմակերպման թէ ընկերային կեանքի հոխացման գծով:

Այսուհետեւ, շրջանի սկաուտները ապրելով բանակումի իրականութիւնը իր գնահատելի թէ երբեմն քննարկելի երեսներով թառնացած թէ վերանորոգուած վերադարձան շրջանս յաջորդ առթիւ անպայման իրենց նմաններու հետ ժամադրուելու Հայաստան:



Շրջանի սկաուտները կը տողանցեն Երեւանի պողոտաներու մէջ

Յաւելեալ նկարներ սեսնել Անգլերէն էջի վրայ